ՔԱՐՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կանոններ՝ քարտի օգտագործման սույն կանոնները.

Բանկ՝ «Ֆասթ Բանկ» ՓԲԸ.

Քարտապան՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, ով Բանկի հետ կնքել է վճարային քարտի դիմում-պայմանագիր (այսուհետ Պայմանագիր).

Քարտ օգտագործող (Օգտագործող)՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր Քարտապանին տրամադրած Քարտը Քարտապանի անունից փաստացի տիրապետող և օգտագործող ֆիզիկական անձ.

Քարտ/եր/՝ Բանկի մասնակցությամբ վճարահաշվարկային համակարգերի ներքո թողարկվող վճարային քարտ(եր), որի(ոնց) միջոցով Քարտապանը կարող է տվյալ քարտատեսակի համար սահմանված պայմաններին և դրույթներին համապատասխան դրամական միջոցներ ելքագրել և մուտքագրել քարտային հաշվին, փոխանցումներ և վճարումներ իրականացնել վճարային սահմանաչափի սահմաններում՝ տվյալ վճարահաշվարկային համակարգի քարտերը սպասարկող կանխիկացման կամ առևտրի և սպասարկման կետերում: Քարտը հանդիսանում է Բանկի սեփականությունը.

Հաշվարկային քարտ՝ Քարտ, որը նախատեսված է Քարտային հաշվին առկա՝ Քարտապանին պատկանող դրամական միջոցների և/կամ Բանկի կողմից տրամադրված վարկային գծի/օվերդրաֆ-տի սահմաններում կանխիկացման, ինչպես նաև՝ անկանխիկ գործառնություններ կամ գործարքներ իրականացնելու համար:

Վարկային գծով քարտ՝ Քարտ, որը նախատեսված է Քարտապանին տրամադրված վարկային գծի սահմաններում կանխիկացման, ինչպես նաև՝ անկանխիկ գործառնություններ իրականացնելու համար: Ընդ որում, Վարկային սահմանաչափի օգտագործած մասից ավելի մուտքագրված գումար-ները օգտագործվում են նույն կանոններով, ինչ Վարկային սահմանաչափի գումարները:

ՊԻՆ-կոդ՝ (Personal Identification Number) Քարտի հետ տրամադրվող կամ Քարտն ակտի-վացնելուց Քարտապանի կողմից սահմանվող կոդ՝ առերես գործարքների ընթացքում կիրառելու նպատակով.

«CVV/CVC» կոդ՝ Քարտի դարձերեսին նշված եռանիշ կոդ, որն օգտագործվում է առցանց/էլեկտրոնային տիրույթում գործարքներ կատարելիս.

ՊՈՍ տերմինալ՝ առևտրի/սպասարկման կետում, մասնաճյուղում կամ օնլայն միջավայրում գործարք/վճարում իրականացնելու նպատակով տեղադրված սարք.

Պայմանագիր՝ Բանկի և Քարտապանի միջև կնքվող վճարային քարտի դիմում-պայմանագիր կամ պայմանագրի կնքման՝ Քարտապանի կողմից ակցեպտավորված առաջարկ/օֆերտա.

Քարտային հաշիվ՝ Քարտապանի անունով Բանկում բացված և սույն կանոններով վարվող բանկային հաշիվ, որում առկա դրամական միջոցները կարող են տնօրինվել նաև Քարտի կիրառմամբ:

Վարկային սահմանաչափ՝ Բանկի կողմից Քարտապանին տրամադրված վարկային գիծ/օվեր-դրաֆտ (համաձայն առանձին կնքվող պայմանագրի), որը կարող է օգտագործվել Քարտով/Քար-տային հաշվով գործառնություններ իրականացնելու համար: Քարտային վարկային գծով Քարտին տրամադրված դրամական միջոցների վրա չի կիրառվում հաշվի դրական մնացորդի դիմաց հաշվարկվող տոկոսադրույք.

Վճարային սահմանաչափ՝ Քարտային հաշվի դրական մնացորդի և Վարկային սահմանաչա-փի հանրագումար.

Հավաստագրում՝ Բանկի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից վճարային քարտով գործառնությունների կատարման թույլտվության ստացման գործընթաց կամ հաստատում.

Տարանցիկ փոխարժեք՝ Բանկի կողմից օրվա ընթացքում սահմանված փոխարժեք, որը հրապարակվում է Բանկի կայքէջում.

Պրոցեսինգային կենտրոն՝ «Արմենիան Քարդ» ՓԲԸ պրոցեսինգային կենտրոն.

Կից քարտ՝ Քարտապանի հաշվին կից լրացուցիչ քարտ, որը կարող է տրամադրվել ինչպես Քարտապանին, այնպես էլ այլ անձի.

Վճարահաշվարկային համակարգ՝ Բանկի հետ համագործակցող վճարահաշվարկային կազմակերպության կողմից սահմանված և մշակված ընդհանուր կանոնների, ընթացակարգերի և վերջիններս ապահովող տեխնիկածրագրային միջոցների ամբողջություն, որոնց ներքո Բանկն իրականացնում է քարտերի թողարկում, սպասարկում և/կամ քարտերի ընդունում որպես վճարային միջոց: Բանկի կողմից թողարկվում և սպասարկվում են հետևյալ վճարահաշվարկային համակարգերի քարտերը՝ Visa, Mastercard և ԱրՔա (ArCa).

Քարտի բլոկավորում՝ Քարտի առցանց (online) Հավաստագրման դադարեցում/արգելափակում:

Քարտային հաշվի սառեցում՝ Քարտային հաշվով դեբետային/կրեդիտային գործառնությունների ամբողջական կամ մասնակի սահմանափակում:

3D Secure համակարգ՝ «Verified by Visa», «MasterCard SecureCode» և այլ անվտանգության համակարգեր, որոնք առցանց/էլեկտրոնային տիրույթում քարտային գործարքների հավաստագրման ժամանակ ապահովում են երկգործոն նույնականացում:

3D Secure code՝ առցանց/էլեկտրոնային տիրույթում գործարքների հավաստագրման համար Բանկի կողմից ուղարկվող մեկանգամյա գաղտնաբառ, որը Քարտապանը ստանում է Բանկին նախապես տրամադրված բջջային հեռախոսահամարին ուղարկվող հաղորդագրության կամ էլեկտրոնային փոստին ուղարկված նամակի միջոցով.

Մեկանգամյա օգտագործման գաղտնաբառ (OTP)՝ Քարտապանի՝ Բանկում գրանցված բջջային հեռախոսահամարին կարճ հաղորդագրությամբ ուղարկվող մեկանգամյա գաղտնաբառ, որը կիրառվում է Քարտապանի կողմից բանկոմատի միջոցով/և կամ Բանկի «FastBank Mobile» հավելվածի միջոցով քարտի ՊԻՆ-կոդը ստեղծելու և քարտն ակտիվացնելու, Քարտապանի կողմից ստեղծված թոքենն ակտիվացնելու համար, ինչպես նաև այլ դեպքերում, որպես Քարտապանի նույնականացման ապահովման միջոց.

Թոքեն՝ Քարտի թվային համարժեքը, որը ստեղծվում է Քարտի Թոքենիզացման արդյունքում: Այն իրենից ներկայացնում է նշանների համադրություն, որին գաղտնագրված են Քարտի տվյալները: Թոքենով կատարված գործարքի ժամանակ կտրոնի վրա արտացոլվում է Թոքենի համարի վերջին 4 նիշը.

Թոքենիզացում՝ Քարտի կցագրում էլեկտրոնային դրամապանակներին, որոնք տալիս են Թոքենով վճարման հնարավորություն.

Թվային տիրույթ՝ Բանկի ինտերնետ, մոբայլ բանկինգում հաճախորդի ածնական էջ կամ հաճախորդի պատշաճ հավաստագրում պահանջող որևէ այլ թվային հարթակ.

Stop-ցուցակ՝ միջազգային համակարգերի կանոններով սահմանված ցուցակ, որի միջոցով արգելափակվում է քարտի կիրառումն օնլայն հավաստագրում չպահանջող սարքերում:

Սակագներ՝ Բանկի ինտերնետային կայքում հրապարակված և/կամ Պայմանագրով սահմանված ծառայությունների սակագներ և դրույքներ:

1. ՔԱՐՏԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

1.1. Քարտը և, առկայության դեպքում, ՊԻՆ-ծրարը Քարտապանին/Օգտագործողին տրամադրվում են Քարտի պատվիրման ընթացքում նախապես համաձայնեցված հաղորդակցման հասցեով՝ Բանկի մասնաճյուղում կամ մասնաճյուղից դուրս գտնվող տարածքում առաքման ծառայության միջոցով:

1.2. Առաքման ծառայությունը պարտավորվում է իրեն հանձնված Քարտը, առկայության դեպքում ՊԻՆ-ծրարը առանց վնասելու և առանց փաթեթավորումը բացելու հասցնել Քարտապանին/Օգտագործողին:

1.3. Քարտը և/կամ առկայության դեպքում ՊԻՆ-ծրարը տրամադրվում են առանձին փակ ծրարներով: Ստանալով քարտը և քարտատեսակով նախատեսված լինելու դեպքում՝ ՊԻՆ-ծրարը, Քարտապանը/Օգտագործողը պարտավոր է ստուգել ծրարների անվնաս լինելը, Քարտի վրա դաջված տվյալների և տրամադրված քարտի համապատասխանությունը պատվիրվածին, որևէ անհամապատասխանություն նկատելու դեպքում մոտենալ Բանկի մասնաճյուղ կամ զանգահարել Կոնտակտային կենտրոն՝ +374 10 510 000 հեռախոսահամարով:

1.4. Քարտի պատվիրումից ~~երեք~~ վեց ամիս անց քարտը Քարտապանի/Օգտագործողի կողմից չստանալու դեպքում Բանկն իրավասու է փակել քարտային հաշիվը և ոչնչացնել քարտը:

1.5. Եթե համաձայնեցված փոստային հասցեով առաքման արդյունքում քարտը և/կամ, առկայության դեպքում, ՊԻՆ-ծրարը հնարավոր չի եղել տրամադրել Քարտապանին/Օգտագործողին, դրանք վերադարձվում են Բանկ և պահվում են Բանկի տարածքում՝ մինչև Քարտապանի/Օգտագործողի հետ առաքման հետագա գործընթացի համաձայնեցումը՝ պահպանելով Կանոնների 1.4 կետում սահմանված Բանկի իրավունքը:

1.6. Քարտը և, առկայության դեպքում, ՊԻՆ-ծրարը ստանալուց հետո Քարտապանը/Օգտագործողը պարտավոր է ակտիվացնել այն՝ օգտագործելով հետևյալ տարբերակներից որևէ մեկը. համապատասխան ծրագրային ապահովում ունեցող բանկոմատում սեղմելով ակտիվացնել քարտը կոճակը և սահմանելով ՊԻՆ-կոդ՝ հետևելով բանկոմատի ցուցումներին կամ զանգահարելով +374 10 510 000 հեռախոսահամարով: Բանկի կողմից Քարտի ակտիվացման մեկանգամյա օգտագործման գաղտնաբառը Քարտապանին/Օգտագործողին ուղարկվում է վերջինիս կողմից Պայմանագրում նշված հեռախոսահամարին և/կամ էլեկտրոնային փոստի հասցեին: Քարտը հնարավոր է նաև ակտիվացնել «FastBank Mobile» հավելվածով Քարտի կարգավորումներ բաժնից՝ հետևելով համապատասխան քայլերի հաջորդականությամբ սահմանված հրահանգներին՝ սահմանելով ՊԻՆ-կոդը: «FastBank Mobile» հավելվածով Քարտն ակտիվացնելու դեպքում արտասահմանում Քարտը ֆիզիկապես օգտագործելուց առաջ անհրաժեշտ է նախքան մեկնելը կատարել մնացորդի հարցման կամ կանխիկացման որևէ գործարք Բանկի բանկոմատով:

1.7. «FastBank Mobile» հավելվածով Քարտն ակտիվացնելու դեպքում արտասահմանում Քարտը ֆիզիկապես օգտագործելուց առաջ անհրաժեշտ է նախքան մեկնելը կատարել մնացորդի հարցման կամ կանխիկացման որևէ գործարք Բանկի բանկոմատով:

1.8. Քարտապանը/Օգտագործողը պարտավորվում է պահպանել ՊԻՆ-կոդի գաղտնիությունը և այն հասանելի չդարձնել այլ անձանց՝ քարտային միջոցների անվտանգության նկատառումներից ելնելով: Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտապանի կողմից իր ՊԻՆ-կոդը երրորդ անձանց հասանելի դարձնելու հետևանքով Քարտի ոչ օրինական և Քարտապանի կողմից չարտոնված օգտագործման համար:

1.9. Քարտի ՊԻՆ-կոդը ենթակա չէ օգտագործման ինտերնետ միջավայրում կամ վիրտուալ գործառնություններ իրականացնելու համար:

1.10. ՊԻՆ-կոդն անհրաժեշտ է քարտով հետևյալ Գործարքների կատարման ժամանակ. Բանկոմատներից կանխիկ գումարների ստացում, POS տերմինալներով ոչ անհպում Գործարքների կատարում, POS տերմինալներով Վճարահաշվարկային համակարգերի կողմից սահմանված գումարային շեմից բարձր անհպում Գործարքների կատարում:

1.11. Քարտապանը/Օգտագործողը կարող է փոխել արդեն իսկ ստեղծված իր ՊԻՆ-կոդը՝ օգտվելով բոլոր այն բանկոմատներից, որոնք ունեն այդ ծառայությունը և/կամ «FastBank Mobile» հավելվածով՝ համապատասխան Քարտի կարգավորումներից՝ հետևելով «FastBank Mobile» հավելվածի քայլերի հաջորդականությամբ սահմանված հրահանգներին:

1.12. Եթե Քարտապանի/Օգտագործողի մոտ առկա է համոզմունք կամ կասկած ՊԻՆ-կոդի՝ այլ անձանց հասանելի դառնալու վերաբերյալ, ապա Քարտապանը/Օգտագործողը պարտավորվում է անմիջապես դիմել Բանկ՝ վճարային քարտը կասեցնելու և նոր ՊԻՆ-կոդ ստանալու նպատակով, կամ փոխել ՊԻՆ-կոդը՝ օգտվելով բանկոմատից և/կամ Բանկի Mobile հավելվածից:

1.13. ՊԻՆ-կոդի երեք անընդմեջ (անկախ փորձերի միջև ընկած ժամանակահատվածից), սխալ մուտքագրման դեպքում քարտը բլոկավորվում է, սակայն Բանկի որոշմամբ քարտը կարող է

չառգրավվել: Քարտը ապաբլոկավորելու համար անհրաժեշտ է առկայության դեպքում օգտվել Թվային տիրույթից կամ զանգահարել **+374 10 510 000** հեռախոսահամարով:

1.14. Քարտային հաշիվը բացվում է Քարտով և Քարտային հաշվով գործառնություններ և գործարքներ իրականացնելու համար: Քարտը թողարկվում է Քարտային հաշվի ներքո:

1.15. Հաշվետեր Քարտապանից ստացված հայտի հիման վրա Բանկը կարող է թողարկել մեկ կամ մի քանի Կից քարտ՝ Հաշվետեր Քարտապանի կողմից նախապես նշված անձանց անունով: Այս դեպքում Հաշվետեր Քարտապանը Բանկին պետք է տրամադրի Կից Քարտապանների վերաբերյալ հավաստի տեղեկություններ:

1.16. Կից Քարտը կարող է օգտագործվել միայն այն անձի կողմից, ում անունով այն թողարկվել է:

1.17. Հաշվետեր Քարտապանը պարտավոր է ծանոթացնել Կից քարտի Քարտապանին՝ Կանոններին և Պայմանագրի հիմնական դրույթներին, և կրում է նշված պարտավորությունը չկատարելու բոլոր ռիսկերը:

1.18. Կից քարտերի վրա տարածվում են սույն Կանոնները, ինչպես նաև Քարտերի և քարտային գործառնությունների վերաբերյալ Բանկում գործող բոլոր նորմատիվ և իրավական ակտերի դրույթները:

1.19. Կից քարտով Գործարքները կատարվում են Վճարային սահմանաչափի շրջանակներում և արտացոլվում են Քարտային հաշվի քաղվածքում՝ համաձայն Կանոնների, ընդ որում՝ Հաշվետեր Քարտապանի կողմից կարող է սահմանվել Կից քարտի գործարքների/գումարների ամսական սահմանաչափ կամ այլ սահմանափակում:

1.20. Քարտի փակման դեպքում փակվում են նաև Կից քարտերը:

1.21. Կից քարտի Քարտապանի կողմից կատարված Գործարքների, այդ թվում՝ Գերածախսի համար պատասխանատվությունը կրում է Հաշվետեր Քարտապանը:

1.22. Քարտը հանդիսանում է Բանկի սեփականությունը:

2. ԲԱՆԿՈՄԱՏՈՒՄ ՔԱՐՏԻ ԱՌԳՐԱՎՈՒՄ

2.1. Բանկոմատը կարող է առգրավել քարտը բլոկավորված լինելու, գործարքից հետո քարտը չվերցնելու կամ այլ խնդիրների առաջացման հետևանքով: Երեք անգամ անընդմեջ սխալ ՊԻՆ-կոդ հավաքելու դեպքում Քարտն ավտոմատ բլոկավորվում է և/կամ կարող է առգրավվել: Քարտի առգրավվման արդյունքում Քարտապանի հնարավոր կրած ֆինանսական հետևանքների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

2.2. Բանկոմատի կողմից առգրավված վճարային քարտերը տրամադրվում են Քարտապանին/Օգտագործողին՝

1) Բանկի մասնաճյուղում գտնվող բանկոմատում առգրավվելու դեպքում՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ Քարտապանի/Օգտագործողի պատշաճ նույնականացում իրականացնելուց հետո,

2) Բանկի մասնաճյուղից դուրս Բանկի բանկոմատում առգրավվելու դեպքում՝ հինգ աշխատանքային օրերի ընթացքում՝ Քարտապանի հետ համաձայնեցված հասցեով:

2.3. Այլ բանկի բանկոմատում առգրավվելու դեպքում՝ այլ բանկի կողմից Քարտը Բանկ վերադարձնելուց հետո երկու աշխատանքային օրերի ընթացքում՝ Քարտապանի հետ համաձայնեցված հասցեով: Ընդ որում՝ Քարտն առգրավվող բանկի որոշմամբ կարող է ոչնչացվել և չվերադարձվել թողարկող բանկ: Այս դեպքում Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտը Քարտապանին չվերադարձնելու համար:

2.4. Առգրավված քարտի մասին Քարտապանը կարող է տեղեկատվություն ստանալ զանգահարելով **+374 10 510 000** հեռախոսահամարով կամ դիմելով բանկի ցանկացած մասնաճյուղ:

3. ՔԱՐՏՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

3.1. Քարտով կատարվող հիմնական գործառնություններն են.

1) կանխիկի ելքագրում՝ բանկոմատի, ՊՈՍ տերմինալի միջոցով կամ առանց քարտի

ներկայացմանԲանկի մասնաճյուղից,

2) կանխիկի մուտքագրում՝ Բանկում, բանկոմատի միջոցով կամ կանխիկ մուտքի հնարավորություն ունեցող այլ սարքավորման միջոցով,

3) քարտից քարտ, դեպի քարտ և այլ տեսակի փոխանցումներ՝ Բանկի կամ այլ թվային հարթակների միջոցով, ինչպես նաև բանկի մասնաճյուղերում,

4) այլ բանկերից գումարի ստացում քարտային հաշվին,

5) անկանխիկ վճարումներ առևտրի/սպասարկման կետերում և/կամ վիրտուալ միջավայրում,

6) Քարտային հաշվին միջոցները կարող են մուտքագրվել նաև Վճարահաշվարկային համակարգերի կողմից նախատեսված այլ տարբերակներով (էլեկտրոնային դրամապանակից քարտին փոխանցում և այլն), որոնց դեպքում Քարտին փոխանցված գումարը կարող է հասանելի դառնալ անմիջապես կամ Վճարահաշվարկային համակարգերի կողմից տվյալ գումարի մուտքագրման եղանակի համար նախատեսված ժամանակահատվածում: Քարտային հաշվին գումարների մուտքագրման դեպքում գումարը համարվում է մուտքագրված տվյալ Գործարքի հաշվառման օրը:

3.2. Սույն կանոնների 3.1 կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված գործարքները հասանելի են դառնում քարտին գործարքի ավարտից մինչև հինգ րոպեի ընթացքում, բացառությամբ ծրագրային խնդիրների կամ լրացուցիչ ուսումնասիրություն պահանջող գործարքների դեպքում, երբ գումարը կարող է հասանելի լինել մինչև մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Միջազգային քարտից քարտ փոխանցումները կարող են հասանելի դառնալ մինչև երեք աշխատանքային օրերի ընթացքում:

3.3. Սույն կանոնների 3.1 կետի 4-րդ ենթակետում նշված գործարքները հասանելի են դառնում քարտային հաշվին հետևյալ ժամկետներում՝

1) եթե Բանկը գումարը ստանում է մինչև ընթացիկ աշխատանքային օրվա ավարտը, փոխանցումները հաշվառվում են նույն աշխատանքային օրվա ընթացքում,

3.4. Սույն կանոնների 3.1 կետի 2-րդ, 3-րդ և 4-րդ ենթակետերում նշված գործարքները քարտից ելքագրվում են գործարքի ավարտի պահին, իսկ քարտային հաշվին որպես կանոն հաշվառվում են հետևյալ ժամկետներում.

1) ԱրՔա համակարգի անդամ բանկերի սպասարկման կետերում կատարված գործարքների դեպքում՝ հաջորդ աշխատանքային օրը,

2) ԱրՔա համակարգից դուրս կատարված գործարքների դեպքում՝ 2-3 աշխատանքային օրերի ընթացքում ներառյալ ApplePay/GooglePay կատարված գործարքները:

3.5. Բանկը պատասխանատվություն չի կրում որևէ գործարքի կամ գումարի՝ քարտին ուշացմամբ հասանելի դառնալու, քարտային հաշվին ուշացմամբ հաշվառվելու համար, եթե նման ուշացման պատճառ է հանդիսանում երրորդ կողմի տեխնիկական խափանումները կամ ոչ Բանկի մեղքով առաջացած այլ պատճառով գործարքների ուշացումը:

~~3.6. Քարտով իրականացվող գործարքների առավելագույն գումարը և քանակը սահմանվում է տվյալ քարտի համար սահմանված պրոդուկտի սակագներով: Սահմանված սահմանաչափերը փոփոխելու նպատակով անհրաժեշտ է Բանկ ներկայացնել հայտ:, որն ուսումնասիրելուց հետո Բանկը կամ կկատարի սահմանաչափերի ավելացում, կամ կմերժի ներկայացված դիմումը:~~

3.7. ՀՀ բանկերի բանկոմատների միջոցով կանխիկացման մեկ գործարքի առավելագույն գումարը չի կարող գերազանցել 500 000 ՀՀ դրամը:

3.8. Բանկն իր Սակագներով սահմանում է քարտով մեկ օրվա ընթացքում կանխիկի ստացման և/կամ անկանխիկ Գործարքների քանակային և գումարային սահմանաչափեր: Այս սահմանաչափերը կարող են փոփոխվել Քարտապանի կողմից Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և չափով դիմելով Բանկին կամ FastBank մոբայլ հավելվածով, որն ուսումնասիրելուց հետո Բանկը կկատարի սահմանաչափերի ավելացում, կամ կարող է մերժել ներկայացված դիմումը:

3.9. Նախքան Քարտով առցանց/էլեկտրոնային տիրույթում Գործարք իրականացնելը՝ Քարտապանը պետք է մանրամասն ծանոթանա տվյալ տիրույթում բաժանորդագրության, գնումների

կատարման, առաքման, Գործարքի չեղարկման, ապրանքների վերադարձման պայմաններին, ինչպես նաև ուշադրություն դարձնի հաճախորդների աջակցման կենտրոնի հետ կապ հաստատելու համար անհրաժեշտ կոնտակտային տվյալների առկայությանը:

3.10. Առցանց/էլեկտրոնային տիրույթում Գործարք կատարելիս՝ Քարտապանը պետք է օգտվի ճանաչված և հուսալի կայքերից, էլեկտրոնային դրամապանակներից և հավելվածներից, որոնք ապահովված են ժամանակակից անվտանգության միջոցներով, ինչպիսիք են Secure Sockets Layer (SSL) սերտիֆիկատ, «Verified by Visa», «MasterCard SecureCode» և այլ անվտանգության համակարգերը: Տեխնիկական կամ Բանկի գործունեությամբ չպայմանավորված որևէ պատճառով 3D Secure անվտանգության գաղտնաբառ չստանալու և դրա արդյունքում Գործարքը խափանվելու դեպքում Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում:

~~3.11.Նախքան Քարտով առցանց/էլեկտրոնային տիրույթում Գործարք իրականացնելը՝ Քարտապանը պետք է մանրամասն ծանոթանա տվյալ տիրույթում բաժանորդագրության, գնումների կատարման, առաքման, Գործարքի չեղարկման, ապրանքների վերադարձման պայմաններին, ինչպես նաև հաճախորդների աջակցման կենտրոնի հետ կապ հաստատելու համար անհրաժեշտ կոնտակտային տվյալների առկայությանը:~~

3.12. Բանկը սահմանում է քարտերով գործարքների կատարման հետևյալ սահմանաչափերը.

Գործարքների սահմանաչափեր	Arca Classic	Visa Digital	Visa Classic	Visa Gold	Mastercard World	Visa Infinite/ Visa Infinite Metal/ Mastercard World Elite	Visa Business Platinum
Կանխիկացման գործարքների օրական առավելագույն քանակ	10	-	10	20	20	20	10
Կանխիկի տրամադրման օրական առավելագույն գումար	2 000 000 ՀՀ դրամ 2 000 ԱՄՆ դոլար 2 000 եվրո 200 000 ՌԴ ռուբլի	-	2 000 000 ՀՀ դրամ 2 000 ԱՄՆ դոլար 2 000 եվրո 200 000 ՌԴ ռուբլի	2 000 000 ՀՀ դրամ 2 000 ԱՄՆ դոլար 2 000 եվրո 200 000 ՌԴ ռուբլի	3 000 000 ՀՀ դրամ 3 000 ԱՄՆ դոլար 3 000 եվրո 500 000 ՌԴ ռուբլի	5 000 000 ՀՀ դրամ 10 000 ԱՄՆ դոլար 10 000 եվրո 800 000 ՌԴ ռուբլի	5 000 000 ՀՀ դրամ 10 000 ԱՄՆ դոլար 10 000 եվրո 800 000 ՌԴ ռուբլի
Անկանխիկ գործարքների օրական առավելագույն քանակ	50	50	50	50	50	50	50
Անկանխիկ գործարքների օրական առավելագույն գումար	10 000 000 ՀՀ դրամ 25 000 ԱՄՆ դոլար 25 000 եվրո 2 000 000 ՌԴ ռուբլի					20 000 000 ՀՀ դրամ 50 000 ԱՄՆ դոլար 50 000 եվրո 4 000 000 ՌԴ ռուբլի	20 000 000 ՀՀ դրամ 50 000 ԱՄՆ դոլար 50 000 եվրո 4 000 000 ՌԴ ռուբլի

Մեկ գործարքի առավելագույն սահմանաչափ	5 000 000 ՀՀ դրամ 10 000 ԱՄՆ դոլար 10 000 եվրո 1 000 000 ՌԴ ռուբլի	10 000 000 ՀՀ դրամ 25 000 ԱՄՆ դոլար 25 000 եվրո 2 000 000 ՌԴ ռուբլի	20 000 000 ՀՀ դրամ 50 000 ԱՄՆ դոլար 50 000 եվրո 4 000 000 ՌԴ ռուբլի	10 000 000 ՀՀ դրամ 25 000 ԱՄՆ դոլար 25 000 եվրո 2 000 000 ՌԴ ռուբլի
ՀՀ տարածքում քարտից քարտ փոխանցումներ, օրական առավելագույն սահմանաչափ	10 000 000 ՀՀ դրամ 25 000 ԱՄՆ դոլար 25 000 եվրո 2 000 000 ՌԴ ռուբլի		20 000 000 ՀՀ դրամ 50 000 ԱՄՆ դոլար 50 000 եվրո 4 000 000 ՌԴ ռուբլի	10 000 000 ՀՀ դրամ 25 000 ԱՄՆ դոլար 25 000 եվրո 2 000 000 ՌԴ ռուբլի

Նշված սահմանաչափերը հնարավոր է փոփոխել՝ Բանկի Թվային տիրույթի միջոցով կամ մասնաճյուղերում: Բանկն իրավունք ունի մերժել սահմանաչափի փոփոխումը: Անկանխիկ գործարքների սահմանաչափը կիրառելի չէ քարտային հաշվով կատարվող գործառնությունների վրա:

3.13. Բանկն իրավունք ունի իր հայեցողությամբ բլոկավորել քարտը, արգելափակել քարտային հաշիվը, քարտային հաշվին կատարված մուտքը կամ որոշակի գործարքների կատարման հնարավորությունը, մուտքագրված միջոցներն ինքնուրույն հետ փոխանցել փոխանցող կողմին, ինչպես նաև քարտին առկա դրամական միջոցներից անակցեպտ կարգով կատարել գանձում, եթե.

1) Քարտապանի/Օգտագործողի կողմից կատարված գործարքներում առկա են «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կասկածելիության չափանիշներ,

2) Քարտապանն/Օգտագործողն ունի չմարված պարտավորություններ Բանկի հանդեպ,

3) Բանկն ունի կասկածներ քարտով կատարվող գործարքների՝ զեղծարար բնույթի վերաբերյալ,

4) Բանկը գումարը փոխանցող գործընկերոջից/ֆինանսական կառույցից ստանում է գրավոր պահանջ՝ գործարքի զեղծարար լինելու կամ տեխնիկական խնդիրների հետևանքով այն չեղյալ հայտարարելու և գումարը հետ փոխանցելու վերաբերյալ,

5) օրենսդրությամբ (ներառյալ՝ «Օտարերկրյա հաշիվների հարկման մասին» ԱՄՆ օրենքով և Միասնական հաշվետվողական ստանդարտով) և Բանկի ներքին իրավական ակտերով նախատեսված պարտադիր նույնականացման համար պահանջվող տեղեկատվության չներկայացման/ոչ պատշաճ ներկայացման դեպքերում,

6) ~~Բանկի կողմից միջոցների սխալմամբ (այդ թվում՝ ծրագրային սխալի պատճառով) մուտքագրման ցանկացած դեպքում,~~ Հաճախորդի օգտին սխալմամբ փոխանցվել է գումար կամ հաճախորդից սխալմամբ չի գանձվել այլ գումարներ,

7) ~~քարտային կամ Բանկի այլ ծառայությունների մատուցման պայմանագրով սահմանված այլ դեպքերում:~~

8) Բանկն իրավունք ունի դադարեցնել գործարար հարաբերությունները հաճախորդի հետ, եթե Բանկն ունի կասկածներ կամ ստացել է մեկից ավել ազդակներ քարտով կատարվող գործարքների՝ զեղծարար բնույթի վերաբերյալ:

3.14. Ցանկացած գործարքի դեպքում կիրառվող սակագները սահմանվում են Բանկի կողմից տվյալ քարտատեսակի համար հաստատված և հրապարակված սակագներով, ինչպես նաև կարող են կիրառվել քարտը այլ սպասարկող Բանկի կողմից սահմանված սակագները:

4. ԲԱՆԿԻ ԵՎ ՔԱՐՏԱՊԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Բանկի և Քարտապանի/Օգտագործողի պարտավորությունները և պատասխանատվությունը սահմանվում են Պայմանագրով:

4.2. Քարտապանը/Օգտագործողը, մինչև քարտի գործողության ժամկետի ավարտը, կրում է ամբողջական ֆինանսական պատասխանատվություն քարտի ՊԻՆ-կոդի կիրառմամբ, ներառյալ ApplePay/Google Pay համակարգերով իրականացված բոլոր գործարքների համար:

4.3. Բանկը պատասխանատվություն չի կրում՝

1) ուշացված, սխալ կամ չիրականացված գործառնությունների համար, որոնք առաջացել են առևտրի և սպասարկման կետերի կամ վճարային համակարգի մեղքով կամ տեխնիկական պատճառներով, որոնք Բանկի հսկողությունից դուրս են եղել,

2) Բանկին չպատկանող միջոցներով իրականացված կանխիկացման կամ վճարման գործառնությունների ձախողման համար, եթե Բանկը ձախողման մեջ չի ունեցել մեղավորություն,

3) Քարտի կամ քարտային տվյալների միջոցով իրականացված անօրինական գործառնությունների համար, եթե դա Բանկի կողմից պայմանագրով սահմանված պարտականությունները չկատարելու հետևանք չի հանդիսացել,

4) չիպային քարտով ՊԻՆ-կոդի միջոցով իրականացված գործառնությունների համար, եթե դա Բանկի կողմից պայմանագրով սահմանված պարտականությունները չկատարելու հետևանք չի հանդիսացել,

5) ինտերնետի միջոցով իրականացված գործառնությունների համար, եթե դա Բանկի կողմից Պայմանագրով սահմանված պարտականությունները չկատարելու հետևանք չի հանդիսացել,

6) Քարտի մագնիսական ժապավենի և/կամ Քարտի վրա տեղադրված չիպի ֆիզիկապես, և/կամ Քարտի հետնամասում նշված CVV2/CVC2 ծածկագրի ընթերցմամբ/մուտքագրմամբ և թողարկող բանկի կողմից օնլայն Հավաստագրմամբ գործարքների համար (անգամ այն դեպքերում, եթե Գործարքի անդորրագրում առկա ստորագրությունը տարբեր է Քարտապանի փաստացի ստորագրությունից),

7) Օֆլայն ռեժիմում իրականացված գործարքների համար, եթե դրանք կատարվել են նախքան հաճախորդի կողմից Բանկին Քարտը վերադարձնելը,

8) այն գործառնությունների համար, որոնք կատարվել են Պայմանագրում սահմանված անվտանգության կանոնների խախտմամբ,

9) Քարտապանի/Օգտագործողի ու առևտրի և սպասարկման կետերի միջև առաջացած վեճերի համար,

10) հաշվի, ՊԻՆ-կոդի, քարտի համարի, գաղտնաբառի և քարտի վերաբերյալ այլ տեղեկատվությունը Բանկից անկախ պատճառներով երրորդ անձանց հայտնի դառնալու համար,

11) անհպում տեխնոլոգիայով իրականացված այն գործարքների համար, որոնց գումարը փոքր է կամ հավասար 20 000 ՀՀ դրամից:

4.4. Յուրաքանչյուր ամիս Բանկը Քարտապանին/Օգտագործողին տեղեկացնում է նախորդ ամսվա ընթացքում Քարտով կատարված գործառնությունների վերաբերյալ՝ տրամադրելով նրան քարտային հաշվից քաղվածք Քարտապանի/Օգտագործողի կողմից ընտրված և պայմանագրով սահմանված կապի միջոցով:

4.5. Քարտը Բանկի կողմից կարող է տեղադրվել միջազգային բլոկավորման համակարգում, եթե առկա է Քարտը արտասահմանյան երկրում չլիազորված օգտագործելու իրական վտանգ, որի դեպքում Քարտապանը պարտավոր է վճարել տվյալ համակարգի կանոններով սահմանված միջազգային բլոկավորման համակարգում տեղադրման վճարը, այդպիսի միջնորդավճար սահմանված լինելու դեպքում՝ անկախ քարտի բլոկավորված կամ փակված լինելու հանգամանքից:

4.6. Ելնելով անվտանգության նկատառումներից՝ Բանկն իրավասու է արգելել կամ սահմանափակել առավել ռիսկային երկրներում Գործարքների կատարումը:

4.7. Բանկն իրավասու է Քարտապանից պահանջել Քարտի օգտագործման արդյունքում Քարտապանի մեղքով, ինչպես նաև Քարտի կորստի/գողության դեպքում՝ մինչև Բանկին տեղեկաց-

նելու պահը կատարված Գործարքների համար /բացառությամբ՝ առանց հավաստագրման կամ օֆ-լայն գործարքների/ Վճարահաշվարկային համակարգերին Բանկի կողմից վճարված գումարները:

4.8. Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Քարտապանի/Օգտագործողի վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով կտրամադրվի ՀՀ կենտրոնական բանկի վարկային ռեգիստր և ԱՔՌԱ վարկային բյուրո:

4.9. Բանկն իրավունք ունի առանց Քարտապանին/Օգտագործողին տեղեկացնելու արգելափակել քարտը, եթե Քարտապանը Բանկում ունի որևէ պարտավորություն, եթե քարտով կատարվում են կասկածելի զեղծարար գործարքներ, ինչպես նաև պարտավորությունների առկայության դեպքում Բանկն իրավունք ունի անակցեպտ կարգով քարտին առկա դրամական միջոցներից և/կամ վարկային սահմանաչափի առկայության դեպքում այդ միջոցներից կատարելու գանձում և ուղղելու Բանկում՝ Քարտապանի/Օգտագործողի ունեցած պարտավորությունների մարմանը:

5. ՔԱՐՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

5.1. Քարտապանը/Օգտագործողն իրավունք ունի բողոքարկել իր կողմից կատարված գործարքները քաղվածքը ստանալուց հետո 30 օրացուցային օրերի ընթացքում (եթե ավելի կարճ ժամկետ սահմանված չէ համապատասխան Վճարահաշվարկային համակարգի կանոններով): ~~Նշված դիմումը կարող է ներկայացվել 55 օրացուցային օրերի ընթացքում, եթե Քարտապանը/Օգտագործողը ներկայացնում է 30 օրվա ընթացքում դիմումը ներկայացնելու անհնարինության վերաբերյալ ապացույցներ:~~ Ավելի ուշ ներկայացված դիմումներին հնարավոր է ընթացք տալ, եթե տվյալ վճարահաշվարկային համակարգի կանոններով հնարավոր է իրականացնել գործարքի բողոքարկում /chargeback/, իսկ բողոքարկման անհնարինության դեպքում գործարքի նկատմամբ պատասխանատվությունը կրում է Քարտապանը/Օգտագործողը: Կանոնների 5.4 կետով սահմանված կարգավորումը գործում է՝ անկախ սույն կետում նշված ժամկետներում դիմումի ներկայացման հանգամանքից:

5.2. Բողոքարկման հայտը հնարավոր է ներկայացնել.

1) Բանկի պաշտոնական էլեկտրոնային հասցեին ուղարկելու միջոցով կամ

2) զանգահարելով Բանկի շուրջօրյա կոնտակտային կենտրոն՝ **+374 10 510 000** հեռախոսահամարով,

3) Բանկի մասնաճյուղի միջոցով:

5.3. Բանկը Քարտապանից/Օգտագործողից դիմումը ստանալուց հետո առավելագույնը **90** օրացուցային օրերի ընթացքում տրամադրում է բողոքարկման արդյունքների վերաբերյալ վերջնական հիմնավոր պատասխան կամ բողոքարկման ժամկետները երկարաձգելու հիմքեր: Առանձին դեպքերում, Քարտապանին/Օգտագործողին պատշաճ ծանուցելով, հնարավոր է պատասխան գրությունը տրամադրվի կամ գումարը վերականգնվի սահմանված 90 օրյա ժամկետից ուշ՝ ելնելով վճարահաշվարկային համակարգերի կանոններից կամ այլ չնախատեսված հանգամանքներից:

5.4. Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտապանի/Օգտագործողի կողմից Քարտով կատարված գործարքների համար, սակայն պատրաստ է հնարավորության սահմաններում օժանդակել Քարտապանի/Օգտագործողի կողմից ներկայացված խնդրի կարգավորմանը: Խնդիրը չկարգավորվելու դեպքում Քարտապանը չի ազատվում Բանկի նկատմամբ ունեցած իր պարտավորություններից:

5.5. Քարտային գործարքների բողոքարկման պայմանները, ընթացակարգերն ու ժամկետները սահմանվում են Վճարահաշվարկային համակարգերի կողմից, որոնք հրապարակային չեն, սակայն նշված տեղեկատվությունը տրամադրվելու է հաճախորդին գործարքների բողոքարկման գործընթացի շրջանակներում՝ իր կողմից նախընտրած եղանակով:

5.6. Եթե բողոքարկման գործընթացի արդյունքում պարզվում է, որ գործարքը կատարվել է Քարտապանի կողմից կամ Կանոնների խախտման հետևանքով, Քարտապանից/Օգտագործողից գանձվում է Բանկի սակագներով սահմանված վճար՝ քարտային պրոդուկտի սակագներով այդպիսին սահմանված լինելու դեպքում:

5.7. Եթե Բանկը, վճարահաշվարկային համակարգի համապատասխան կանոնների համաձայն, որոշում է կայացնում ընդհատել բողոքարկման ընթացքը, սակայն Քարտապանը՝ իր կողմից ներկայացված գրավոր դիմումի համաձայն ցանկանում է շարունակել այն, ապա նախաարբիտրաժային և արբիտրաժային գործընթացի ընթացքում Բանկից գանձված միջնորդավճարները և ծախսերը փոխհատուցվում են Քարտապանի/Օգտագործողի կողմից:

6. ՔԱՐՏԱՅԻՆ ԱՐԺՈՒՅԹԻՑ ՏԱՐԲԵՐՎՈՂ ԱՐԺՈՒՅԹՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԿԻՐԱՌՎՈՂ ՓՈԽԱՐԺԵՔԸ

6.1. Քարտով գործարքները հնարավոր է իրականացնել ինչպես Քարտային հաշվի արժույթով, այնպես էլ Քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով: Քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով կատարված գործարքների հավաստագրման և հաշվառման ժամանակ գործարքի գումարը փոխարկվում է քարտային հաշվի արժույթի:

6.2. Քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով գործարքի դեպքում գործարքի հավաստագրման և փաստացի հաշվեգրման ժամանակ կիրառվող փոխարժեքները կարող են տարբերվել: Գործարքի գումարը Քարտային հաշվի արժույթի փոխարկելու արդյունքում փոխարժեքների տարբերությունից առաջացած վնասների, արժույթային և այլ ռիսկերի համար, Բանկը պատասխանատվություն չի կրում:

6.3. Քարտային հաշվի արժույթով կատարված գործարքների դեպքում փոխարկում չի կատարվում:

6.4. Հաշվի արժույթից տարբերվող արժույթով կատարված գործարքների հավաստագրման պահին գործառնության գումարը փոխարկվում է քարտի արժույթի՝ հիմք ընդունելով գործառնության կատարման պահին վճարային համակարգերի կողմից սահմանված փոխարժեքը և/կամ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակվող արժութային շուկայում ձևավորված միջին շուկայական փոխարժեքը՝ առքի կամ վաճառքի համար համապատասխանաբար նվազեցնելով կամ ավելացնելով Պրոցեսինգային կենտրոնի խորհրդի նիստի որոշմամբ սահմանված տոկոսադրույքը:

6.5. Հաշվի արժույթից տարբերվող արժույթով կատարված գործարքների հաշվառման ժամանակ փոխարկումը կատարվում է ստորև ներկայացված սկզբունքներով.

6.6. ՀՀ տարածքում կատարված գործարքների դեպքում գործառնության գումարը փոխարկվում է քարտի արժույթի՝ հիմք ընդունելով գործառնության կատարման պահին վճարային համակարգերի կողմից սահմանված փոխարժեքը և/կամ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակվող արժութային շուկայում ձևավորված միջին շուկայական փոխարժեքը՝ առքի կամ վաճառքի համար համապատասխանաբար նվազեցնելով կամ ավելացնելով Պրոցեսինգային կենտրոնի խորհրդի նիստի որոշմամբ սահմանված տոկոսադրույքը:

6.7. ՀՀ սահմաններից դուրս Քարտով կատարված գործառնությունների գումարը փոխարկվում է Քարտային հաշվի արժույթի հետևյալ կերպ.

Գործարքի արժույթ	

Եվրո	Վիզա վճարահաշվարկային համակարգի քարտերի դեպքում Եվրոն փոխարկվում է քարտի արժույթի՝ գործառնությունը Բանկի Պրոցեսինգային կենտրոնում մշակելու օրվան նախորդող աշխատանքային օրվա դրությամբ՝ Բանկի կողմից քարտային գործառնությունների ձևակերպման համար սահմանված վերջին փոխարժեքով: Մաստերքարտ վճարահաշվարկային համակարգի քարտերի դեպքում գործարքը եվրոյից փոխարկվում է նախ ԱՄՆ դոլարի՝ վճարահաշվարկային համակարգերի կողմից սահմանված փոխարժեքով և կանոնները, այնուհետև ստացված ԱՄՆ դոլարը փոխարկվում է քարտի արժույթի՝ գործառնությունը Բանկի Պրոցեսինգային կենտրոնում մշակելու օրվան նախորդող աշխատանքային օրվա դրությամբ Բանկի կողմից քարտային գործառնությունների ձևակերպման համար սահմանված վերջին փոխարժեքով:
ԱՄՆ դոլար	Մաստերքարտ տեսակի քարտերի դեպքում ԱՄՆ դոլարը փոխարկվում է քարտի արժույթի՝ գործառնությունը Բանկի Պրոցեսինգային կենտրոնում մշակելու օրվան նախորդող աշխատանքային օրվա դրությամբ Բանկի կողմից քարտային գործառնությունների ձևակերպման համար սահմանված վերջին փոխարժեքով: Վիզա վճարահաշվարկային համակարգի քարտերի դեպքում գործարքը ԱՄՆ դոլարից փոխարկվում է նախ եվրոյի՝ վճարահաշվարկային համակարգերի կողմից սահմանված փոխարժեք +/- 2%-ով (ելքային գործարքների դեպքում կատարվում է VISA վճարային համակարգի փոխարժեք + 2%-ով, իսկ մուտքային գործարքների դեպքում՝ -2%), այնուհետև ստացված եվրոն փոխարկվում է քարտի արժույթի՝ գործառնությունը Բանկի Պրոցեսինգային կենտրոնում մշակելու օրվան նախորդող աշխատանքային օրվա դրությամբ Բանկի կողմից քարտային գործառնությունների ձևակերպման համար սահմանված վերջին փոխարժեքով :
Այլ արժույթ	Վիզա վճարահաշվարկային համակարգի քարտերի դեպքում գործարքի գումարը փոխարկվում է նախ եվրոյի՝ վճարահաշվարկային համակարգերի կողմից սահմանված փոխարժեք +/- 2%-ով (ելքային գործարքների դեպքում կատարվում է VISA վճարային համակարգի փոխարժեք + 2%-ով, իսկ մուտքային գործարքների դեպքում՝ -2%), այնուհետև ստացված եվրոն փոխարկվում է քարտի արժույթի՝ գործառնությունը Բանկի Պրոցեսինգային կենտրոնում մշակելու օրվան նախորդող աշխատանքային օրվա դրությամբ Բանկի կողմից քարտային գործառնությունների ձևակերպման համար սահմանված վերջին փոխարժեքով : Մաստերքարտ վճարահաշվարկային համակարգի քարտերի դեպքում գործարքի գումարը փոխարկվում է նախ ԱՄՆ դոլարի՝ վճարահաշվարկային համակարգերի կողմից սահմանված փոխարժեքով և կանոնները, այնուհետև ստացված ԱՄՆ դոլարը փոխարկվում է քարտի արժույթի՝ գործառնությունը Բանկի Պրոցեսինգային կենտրոնում մշակելու օրվան նախորդող աշխատանքային օրվա դրությամբ Բանկի կողմից քարտային գործառնությունների ձևակերպման համար սահմանված վերջին փոխարժեքով:

~~6.8. Գործառնության կատարման պահին գործառնության գումարը փոխարկվում է քարտի~~

~~արժույթի՝ հիմք ընդունելով գործառնության կատարման պահին վճարային համակարգերի կողմից սահմանված փոխարժեքը և/կամ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակվող արժութային շուկայում ձևավորված միջին շուկայական փոխարժեքը՝ առքի կամ վաճառքի համար համապատասխանաբար նվազեցնելով կամ ավելացնելով Պրոցեսինգային կենտրոնի խորհրդի նիստի որոշմամբ սահմանված տոկոսադրույքը:~~

~~6.9. Պրոցեսինգային կենտրոնի անդամ բանկերի սպասարկման ցանցում կատարված գործարքի հաշվառման նպատակով փոխարկումը քարտի արժույթի կատարվում է գործառնությունը Պրոցեսինգային կենտրոնում մշակելու օրվան նախորդող աշխատանքային օրվա դրությամբ Բանկի կողմից քարտային գործառնությունների ձևակերպման համար սահմանված վերջին փոխարժեքով կամ տարանցիկ փոխարժեքով՝ հիմք ընդունելով գործառնությունը Բանկի Պրոցեսինգային կենտրոնում մշակելու օրվան նախորդող աշխատանքային օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակվող արժութային շուկայում ձևավորված միջին շուկայական փոխարժեքը և Բանկի կողմից քարտային գործառնությունների ձևակերպման համար սահմանված վերջին փոխարժեքները:~~

~~6.10. Քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով գործարքների դեպքում հավաստագրման և փաստացի հաշվառման ժամանակ կիրառվող փոխարժեքները կարող են տարբերվել: Այլ բանկերի սպասարկման ցանցում Visa քարտերով եվրոյից, իսկ այլ քարտերով՝ ԱՄՆ դոլարից տարբերվող արժույթով միջազգային գործարքների դեպքում կատարվում է գործարքի արժույթից փոխանակում Visa քարտերի դեպքում եվրոյի (ընդ որում, նշված դեպքերում գործարքի գումարը եվրո փոխարկելու համար Visa քարտերի դեպքում կատարվում է 2% շեղումով/տարբերությամբ), իսկ այլ քարտերի դեպքում՝ ԱՄՆ դոլարի գործառնության մշակման օրվա դրությամբ արտարժույթի միջբանկային շուկաներում ձևավորված փոխարժեքների հիման վրա և, անհրաժեշտության դեպքում, փոխարկվում է քարտի արժույթի՝ գործառնությունը Բանկի Պրոցեսինգային կենտրոնում մշակելու օրվան նախորդող աշխատանքային օրվա դրությամբ Բանկի կողմից քարտային գործառնությունների ձևակերպման համար սահմանված վերջին փոխարժեքով կամ տարանցիկ փոխարժեքով՝ հիմք ընդունելով գործառնությունը Բանկի Պրոցեսինգային կենտրոնում մշակելու օրվան նախորդող աշխատանքային օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակվող արժութային շուկայում ձևավորված միջին շուկայական փոխարժեքը և Բանկի կողմից քարտային գործառնությունների ձևակերպման համար սահմանված վերջին փոխարժեքները:~~

~~6.11.Գործառնության կատարման և գործառնության մշակման օրերին կիրառվող արտարժույթի փոխարժեքի տարբերության հետևանքով քարտային հաշվով ձևակերպված գործառնության գումարը տարբերվում է գործառնության կատարման պահին քարտից գանձված գումարից: Փոխարժեքների տարբերության հետ կապված արժութային և այլ ռիսկերի համար Բանկը պատասխանատվություն չի կրում:~~

7. ՔԱՐՏԻ/ԹՈՔԵՆԻ ԿՈՐՍՏԻ, ԳՈՂՈՒԹՅԱՆ, ՀՆԱՐԱՎՈՐ ԶԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՔԱՅԼԵՐԸ, ՔԱՐՏԻ ԲԼՈԿԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱՊԱԲԼՈԿԱՎՈՐՈՒՄԸ

7.1. Քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) դեպքում Քարտապանը/Օգտագործողը պարտավոր է անմիջապես այդ մասին տեղեկացնել Բանկին և բլոկավորել քարտը՝ հետևյալ եղանակներից մեկով.

1) Բանկի թվային ծառայությունների անձնական էջի օգնությամբ. այս դեպքում տեխնիկական խնդիրների բացակայության դեպքում քարտը բլոկավորվում է Քարտապանի կողմից նույն պահին,

2) Դիմելով Բանկի ցանկացած մասնաճյուղ,

3) զանգահարելով Բանկի շուրջօրյա կոնտակտային կենտրոն՝ **+374 10 510 000** հեռախոսահամարով. այս դեպքում քարտը կբլոկավորվի Բանկի աշխատակցի կողմից՝ անմիջապես պատշաճ նույնականացում իրականացնելուց հետո,

4) իրավաբանական անձ Քարտապանի անունով գործող բիզնես քարտի դեպքում, երբ

Քարտի օգտագործող է հանդիսանում իրավաբանական անձի ներկայացուցիչը, Քարտը կարող է բլոկավորվել Օգտագործողի կողմից՝ զանգահարելով Քարտին կցված հեռախոսահամարից Բանկի շուրջօրյա Կոնտակտային կենտրոն՝ **+374 10 510 000** հեռախոսահամարով:

~~7.2. Մինչև քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) մասին Բանկին տեղեկացնելը, քարտով կատարված գործարքների համար պատասխանատվությունը կրում է Քարտապանը:~~

~~7.3.~~ Քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) մասին Բանկին տեղեկացնելուց հետո քարտով մինչև Բանկին տեղեկացնելու պահն իրականացված՝ գործարքների, այդ թվում՝ ինտերնետ միջավայրում կատարված գործարքների համար պատասխանատվությունը կրում է Քարտապանը /բացառությամբ՝ առանց հավաստագրման գործարքների: ~~Առանց հավաստագրման կատարված գործարքների բողոքարկումը հնարավոր դարձնելու համար Քարտապանի համապատասխան դիմումի հիման վրա Բանկը տվյալ վճարահաշվարկային համակարգի կանոններով սահմանված ժամկետում քարտը ներառում է առաջիկա Stop-ցուցակում՝ համաձայն Բանկի սակագների, ինչի վերաբերյալ Բանկը ծանուցում է Քարտապանին նույն եղանակով, որով ստացվել է դիմումը:~~

7.4. Քարտապանը պարտավոր է հատուցել քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) մասին Բանկին չտեղեկացնելու, ինչպես նաև մինչև Բանկին տեղեկացնելը երրորդ անձանց կողմից քարտի օգտագործման հետևանքով Բանկի կրած ծախսերը, կորուստները և վնասները:

7.5. Քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) դեպքում խորհուրդ է տրվում վերաթողարկել քարտը: Եթե Քարտապանը ցանկանում է շարունակել օգտագործել քարտը, ապա պետք է Բանկ ներկայացնի քարտի ապաբլոկավորման դիմում: Այս դեպքում քարտի օգտագործման հետ կապված հնարավոր կորուստների և վնասների համար պատասխանատվությունը կրում է միայն Քարտապանը: Այն դեպքում, երբ քարտի ապաբլոկավորումը կարող է Բանկի համար ստեղծել լրացուցիչի ֆինանսական կորուստ, ապա Բանկը կարող է մերժել ապաբլոկավորման հայտը:

7.6. Բանկն իր նախաձեռնությամբ կարող է բլոկավորել Քարտը, եթե հայտնաբերել է զեղծարարության կասկած հարուցող Գործարքներ:

7.7. Քարտը կարող է բլոկավորվել նաև սույն կանոնների 3.~~9~~ 11 կետում նշված դեպքերում:

7.8. Քարտը կարող է ապաբլոկավորվել.

1) «FastBank Mobile» հավելվածի օգնությամբ, եթե այն բլոկավորվել է նույն եղանակով, այս դեպքում, տեխնիկական խնդիրների բացակայության դեպքում, քարտը ապաբլոկավորվում է նույն պահին կամ,

2) զանգահարելով Բանկի շուրջօրյա կոնտակտային կենտրոն՝ **+374 10 510 000** հեռախոսահամարով, այս դեպքում քարտը կապաբլոկավորվի Բանկի աշխատակցի կողմից՝ անմիջապես պատշաճ նույնականացում իրականացնելուց հետո, եթե քարտի բլոկավորման հիմքերը արդեն բացակայում են,

3) Բանկի ցանկացած մասնաճյուղում հայտ ներկայացնելու միջոցով,

4) ՀՀ նկատմամբ պարտավորություններ ունենալու դեպքում քարտը կապաբլոկավորվի պետական մարմիններից համապատասխան գրություն/հաղորդագրություն ստանալուց հետո:

7.9.Թոքենի կորստի, գողացվելու կամ չլիազորված օգտագործման դեպքում Քարտապանը պարտավոր է անմիջապես քայլեր ձեռնարկել դրանք բլոկավորելու համար,դա հնարավոր է կատարել Բանկի ցանկացած մասնաճյուղում գրավոր դիմում ներկայացնելով և/կամ զանգահարելով **+374 10 510 000** հեռախոսահամարով:

7.10. Չլիազորված օգտագործման մասին տեղեկացումը ստանալու դեպքում քարտն անմիջապես բլոկավորվում է, և Բանկը, Քարտապանի դիմումի հիման վրա, ուսումնասիրում է գործարքի մանրամասները, անհրաժեշտության/հնարավորության դեպքում, սկսում գործարքի բողոքարկման գործընթացը:

7.11. Բլոկավորումից հետո կորցրած քարտը/թոքենը հայտնաբերելու դեպքում այն ապաբլոկավորելու համար Քարտապանը կարող է դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարելով Բանկի շուրջօրյա կոնտակտային կենտրոն՝ **+374 10 510 000** հեռախոսահամարով:

7.12. Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտապանի/Օգտագործողի՝ Բանկին չտեղեկացնելու կամ ուշ տեղեկացնելու հետևանքով կրած վնասների համար:

8. ՔԱՐՏԻ ՎԵՐԱԹՈՂԱՐԿՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

8.1. Վճարային քարտը կարող է վերաթողարկվել.

1) եթե քարտի ժամկետի ավարտին Քարտապանից/Օգտագործողից չի ստացվել փակման դիմում,

2) Բանկը, մինչև քարտի Ժամկետի ավարտը՝ Ժամկետի ավարտին նախորդող վերջին 15 օրերի ընթացքում, առանց Քարտապանի լրացուցիչ համաձայնության կարող է վերաթողարկել Քարտը՝ այդ պահին Բանկի կողմից սահմանված Քարտի գործողության ժամկետով՝ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված պայմաններին բավարարելու դեպքում:

3) Այն վճարային քարտերը, որոնց վրա առկա է վարկային գիծ (օվերդրաֆտ) վերաթողարկումը կատարվում է Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված պայմաններին բավարարելու դեպքում:

~~4) քարտի ժամկետի ավարտի դեպքում՝ Բանկի կողմից սահմանված չափորոշիչներին բավարարելու պարագայում, ընդ որում՝ քարտը տրամադրվում է Քարտապանին փոխհամաձայնեցված եղանակով ոչ ուշ, քան քարտի ժամկետի ավարտից երկու աշխատանքային օր շուտ,~~

5) քարտի ժամկետի ավարտի, քարտի կորստի կամ այլ դեպքերում՝ Քարտապանի/Օգտագործողի դիմումի հիման վրա, ընդ որում՝ քարտը տրամադրվում է Քարտապանին փոխհամաձայնեցված եղանակով ոչ ուշ, քան դիմումը ներկայացնելուց հետո հինգ աշխատանքային օրերի ընթացքում,

6) Բանկի կողմից զեղծարարության կասկածի, քարտի հնարավոր տվյալների արտահոսքի կասկածի կամ այլ դեպքերում, ընդ որում՝ քարտը տրամադրվում է Քարտապանին փոխհամաձայնեցված եղանակով քարտի վերաթողարկումից ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրերի ընթացքում:

9. ՔԱՐՏԻ ԵՎ ՀԱՇՎԻ ՓԱԿՈՒՄԸ

9.1. Քարտը և հաշիվը փակվում են Քարտապանի դիմումի համաձայն:

9.2. Բանկն իրավասու է միակողմանիորեն դադարեցնել քարտի գործողությունը (փակել քարտը) և փակել քարտային հաշիվը հետևյալ դեպքերում՝

1) եթե Քարտապանն ունի քարտի հետ կապված Բանկի նկատմամբ չմարված պարտավորություններ, որոնք արտացոլող քաղվածքը Քարտապանի կողմից ստանալու օրվանից անցել է 30 օր և ավելի,

2) եթե Քարտապանն ունի Բանկի նկատմամբ այլ չմարված պարտավորություններ,

3) Քարտապանի մահվան, սնանկության դեպքերում՝ այդպիսի փաստերի մասին պատշաճ/հիմնավոր ստացված ծանուցման հիման վրա,

4) ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

9.3. Քարտը և հաշիվը փակվում են քարտով նախկինում կատարված բոլոր գործառնությունները քարտային հաշվով ձևակերպելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ պայմանով, որ հաշվի մնացորդը բավարարում է քարտով կատարված գործառնությունները ձևակերպելու և դրանց համար Բանկի սակագներով նախատեսված միջնորդավճարները գանձելու համար:

9.4. Քարտի և հաշվի փակումը հնարավոր է իրականացնել քարտի վերաբերյալ ունեցած բոլոր պարտավորությունները կատարելուց հետո:

9.5. Քարտի գործողությունը վաղաժամկետ դադարեցնելու դեպքում գանձված միջնորդավճարների մասով իրականացվում է վերահաշվարկ և վերադարձվում է հաճախորդին:

9.6. Քարտը փակելիս փակվում են նաև այդ Քարտի բոլոր Կից քարտերը և ենթակա են վերադարձման Բանկ:

9.7. Կից քարտը կարող է փակվել ինչպես հիմնական Քարտապանի, այնպես էլ կից քարտի Քարտապանի կողմից:

9.8. Քարտը հանդիսանում է Բանկի սեփականությունը և ենթակա է վերադարձման Բանկ՝ դրա վավերականության ժամկետի ավարտի դեպքում կամ Բանկի պահանջով՝ բացառությամբ Վիրտուալ քարտերի, որոնց դեպքում դադարեցվում է Քարտային հաշվից օգտվելու հնարավորությունը, իսկ Քարտային հաշիվը փակվում է:

9.9. Քարտի գործողության դադարեցման դիմում ներկայացնելիս քարտը Բանկին հետ չվերադարձնելու դեպքում Քարտապանը լրիվ ֆինանսական պատասխանատվություն է կրում քարտի գործողության դադարեցումից հետո մինչև քարտի գործողության ժամկետի ավարտը քարտով կատարված հավաստագրում (գործառնության կատարման իրավասության օնլայն ստուգում) չպահանջող գործարքների համար:

9.10. Դրական մնացորդ ունենալու դեպքում, եթե հաճախորդն ունի Բանկում գործող այլ հաշիվ, ապա մնացորդը տեղափոխվում է այդ հաշվին և քարտային հաշիվը փակվում է, իսկ այլ հաշիվ չունենալու դեպքում Քարտապանը կարող է մոտենալ Բանկ և ստանալ հաշվին առկա մնացորդը կամ հրաժարվել նշված մնացորդից՝ ներկայացնելով համապատասխան դիմում:

9.11. Քարտի փակումը չի դադարեցնում Քարտի հետ կապված Քարտապանի՝ Բանկի նկատմամբ ձևավորված պարտավորությունները՝ ներառյալ հաշվարկված տոկոսները և տուժանքները:

9.12. Քարտապանը պարտավոր է մարել նաև Քարտով կատարված այն գործարքների արդյունքում ձևավորված պարտավորությունները, որոնք կատարվել են նախքան Քարտի փակումը, սակայն վճարման համար Բանկ են ներկայացվել Քարտի փակումից հետո:

10. ՔԱՐՏԻ ԵՎ ՔԱՐՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

10.1. Քարտի սպասարկման պայմանները և սակագները սահմանվում են տվյալ քարտատեսակի սակագներով, որոնք հրապարակվում են Բանկի կայքէջում՝ www.fastbank.am և թվային հարթակներում: Նախքան քարտի դիմում-պայմանագիր ստորագրելը, Քարտապանը/Օգտագործողը պարտավոր է ծանոթանալ առաջարկվող սակագներին:

10.2. Բանկի կողմից իրականացվող գործառնությունների սակագները կարող են միակողմանիորեն փոփոխվել՝ փոփոխությունից առնվազն 15 օրացուցային օր առաջ տեղեկացնելով Քարտապանին վերջինիս կողմից Պայմանագրով սահմանված Բանկի հետ հաղորդակցման միջոցով:

10.3. Քարտապանի գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա Քարտի գործողության ժամանակավորապես կասեցումը (բլոկավորումը) չի դադարեցնում Քարտի գործողությունը, ինչպես նաև Քարտի սպասարկման միջնորդավճարի գանձումը:

10.4. Քարտային հաշվի օրական մնացորդի նկատմամբ Բանկը կարող է հաշվեգրել տոկոս՝ տվյալ ժամանակահատվածի համար Բանկում գործող սակագներով և Պայմանագրով սահմանված չափով, ընդ որում՝ օրական մնացորդ է համարվում տվյալ գործառնական օրվա ավարտին քարտային հաշվի փաստացի մնացորդը:

10.5. Քարտային հաշվում առկա գումարի վրա տոկոսները հաշվարկվում են գումարը Բանկ մուտք լինելու օրվանից մինչև այն Քարտապանին վերադարձնելու կամ Քարտապանի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածի օրացուցային օրերի համար: Եթե քարտի արժույթը տարբեր է ՀՀ դրամից, ապա հաշվարկված տոկոսագումարները վճարվում են այդ հաշվի արժույթով:

10.6. Քարտը Քարտապանին կարող է տրամադրվել նաև աշխատավարձ ստանալու նպատակով՝ արտոնյալ պայմաններով և սակագներով: Եթե Քարտապանը իր աշխատավարձն այլևս չի ստանում նշված քարտով կամ Բանկում իր անունով բացված այլ հաշվին, Բանկն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն դադարեցնել տրամադրված արտոնյալ սակագները և պայմանները և շարունակել սպասարկել քարտը տվյալ քարտատեսակի ընթացիկ սակագնով:

10.7. Քարտով գործարքների իրականացման, ինչպես նաև Բանկի կողմից քարտի սպասարկման հետ կապված վճարների գանձման արդյունքում քարտի վճարային սահմանաչափը գերազանցելու դեպքում քարտային հաշվին ձևավորվում է գերածախս: Քարտի գծով կարող է ձևավորվել Գերածախս՝ կախված Գործարքների որոշ տեսակների (հյուրանոցների ամրագրման գործարքներ, ավտովարձույթի սպասարկման կետերում կատարված գործարքներ, տուրիզմի և զվարճանքի ոլորտի սպասարկման կետերում կատարված գործարքներ և այլն) առանձնահատկություններից, սպասարկող բանկի կողմից Գործարքի ներկայացման ժամկետներից, սպասարկման կետի կողմից կատարված հետվճարներից/հետվերադարձերից, օֆլայն ռեժիմում կատարված Գործարքներից (որոնց դեպքում Գերածախսը կարող է առաջանալ նաև Քարտով դրամական միջոցների բացակայության դեպքում), Բանկի կողմից սահմանված միջնորդավճարներից, արտարժույթի փոխանակմամբ Գործարքներից և այլն: Քարտով Գործարքները պետք է իրականացվեն Վճարային սահմանաչափի սահմաններում: Վճարային սահմանաչափը գերազանցելու դեպքում Բանկի սակագներով սահմանված դեպքում և չափով Բանկը Քարտապանից կարող է գանձել վճարային սահմանաչափը գերազանցելու տուժանք:

10.8. Բանկի սակագներով քարտի համար սահմանված միջնորդավճարները և քարտի սպասարկման հետ կապված այլ վճարները՝ ներառյալ քարտային հաշվին ձևավորված գերածախսը և տուժանքը, պարտավորությունները կազմող գումարները Բանկի կողմից գանձվում են անակցեպտ եղանակով՝ առանց Քարտապանի հանձնարարականի: Գանձումն առաջնահերթ կատարվում է քարտային հաշվից, իսկ քարտային հաշվին միջոցների բացակայության դեպքում՝ Քարտապանի այլ հաշիվներից, այդ թվում՝ արտարժույթային հաշիվներից,որոնց արդյունքում արտարժույթի՝ ՀՀ դրամի փոխարկումն իրականացվում է փոխարկման պահին Բանկում գործող առքի/վաճառքի անկանխիկ փոխարժեքով, որը հրապարակվում է Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում: ~~Միևնույն արժույթով հաշիվներից միջնորդավճարների գանձման նախապատվությունը տրվում է ավելի վաղ բացված հաշվին:~~ Ընդ որում՝ Քարտապանը պարտավոր է ապահովել համապատասխան դրամական միջոցների առկայությունը Բանկում ունեցած իր բանկային հաշիվներին: Քարտերի սակագներով սահմանված թողարկման, սպասարկման, վերաթողարկման կամ տրամադրման հետ կապված վճարները գանձվում են՝ փոխարկումը կատարելով փոխարկման պահին Բանկում գործող առքի/վաճառքի անկանխիկ փոխարժեքով, որը հրապարակվում է Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում:

10.9. Չեղարկված գործարքի գումարը առևտրի/սպասարկման կետի կողմից ծրագրային վերադարձվելուց հետո Բանկը հինգ աշխատանքային օրերի ընթացքում մուտքագրում է քարտային հաշվին՝ նվազեցնելով չեղարկման համար պահումները: Քարտապանը պարտավոր է Բանկին վճարի կատարված գործարքի արդյունքում Բանկի նկատմամբ ձևավորված պարտավորությունները:

10.10. Կանոններն ու Սակագները պարունակում են Բանկի կողմից Քարտերի տրամադրման և սպասարկման հետ կապված հարաբերությունները կարգավորող դրույթներ: Այդուհանդերձ, Վճարահաշվարկային համակարգերը կարող են ունենալ Քարտի կոնկրետ տեսակներով Գործարքների իրականացման հատուկ սահմանաչափեր և այլ կանոններ, որոնք նույնպես ենթակա են պահպանման Բանկի և Քարտապանի կողմից, և որոնց չպահպանման հետևանքով Քարտապանի կրած վնասների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

10.11. Բանկը պատասխանատվություն չի կրում առևտրի/սպասարկման կետի կողմից մատուցված որևէ ծառայության դիմաց գանձված և Քարտապանի քարտային հաշվից ելքագրված վճարի համար:

11. ՔԱՐՏԱՅԻՆ ՁԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՁՍՊՈՒՄԸ

11.1. Քարտապանը/Օգտագործողը քարտը և ՊԻՆ-կոդը պետք է պահպանի այլ անձանց համար անհասանելի վայրում:

~~11.2. Քարտը ստանալուն պես Քարտապանը/Օգտագործողի պարտավոր է ստորագրել քարտի դարձերեսին գտնվող ստորագրության ժապավենի վրա:~~

11.3. Բանկոմատի միջոցով նոր ՊԻՆ-կոդ սահմանելիս կամ այն փոփոխելիս անհրաժեշտ է օգտագործել հնարավորինս բարդ թվային համակցություն՝ խուսափելով կրկնվող թվերի համակցությունից:

11.4. Արգելվում է վճարումներ կամ կանխիկացում իրականացնելիս քարտը փոխանցել երրորդ անձանց, ինչպես նաև նրանց տրամադրել քարտի ՊԻՆ-կոդը, անվտանգ ինտերնետային առևտուր իրականացնելու համար կարճ հաղորդագրության ծառայության (SMS) կամ այլ միջոցով Քարտապանին/Օգտագործողին տրամադրված մեկանգամյա ծածկագիրը (3D Secure code), քարտի վրա նշված անվտանգության եռանիշ կոդը (CVV code), ՊԻՆ-կոդ նշանակելու կամ փոխելու համար տրամադրված կոդը, բանկային ծածկագիրը:

11.5. Ինտերնետ միջավայրում Գործարքների իրականացման դեպքում ՊԻՆ-կոդի մուտքագրում չի պահանջվում, և նախատեսված չէ որևէ Վճարահաշվարկային համակարգի կողմից:

11.6. Քարտով անհպում Գործարքների դեպքում Վճարահաշվարկային համակարգերի կամ տվյալ առևտրի սպասարկման կետի կողմից կարող են սահմանվել սահմանաչափեր, որոնք չգերազանցելու դեպքում ՊԻՆ-կոդի մուտքագրում չի պահանջվում, ընդ որում՝ այն դեպքում, երբ առևտրի և սպասարկման կետի կողմից սահմանված սահմանաչափը գերազանցում է Վճարահաշվարկային համակարգերի կողմից սահմանված սահմանաչափը, ապա դրա պատասխանատվությունը կրում է տվյալ առևտրի սպասարկման կետը:

11.7. Արգելվում է քարտը և ՊԻՆ-կոդը պահպանել միասին կամ գրել քարտի վրա:

11.8. ՊԻՆ-կոդը մուտքագրելիս պետք է հնարավորինս անհասանելի դարձնել այն շրջապատի և տեսաձայնագրող սարքերի համար:

11.9. Քարտի կորստի, գողության կամ զեղծարարության կասկածի դեպքում անհրաժեշտ է անմիջապես բլոկավորել այն և հետագայում փոխարինել նոր քարտով:

11.10. Բանկոմատով կամ այլ ինքնասպասարկման սարքի միջոցով գործարք կատարելիս՝ Քարտապանը պետք է ուշադրություն դարձնի սարքի արտաքին տեսքին և ստեղնաշարին: Օտարածին սարքերի, տեսահսկման համակարգերի, լարերի առկայության կամ այլ կասկածների դեպքում անհրաժեշտ է օգտվել այլ բանկոմատից կամ ինքնասպասարկման սարքից:

11.11. Քարտապանը/Օգտագործողն առևտրի և սպասարկման կետերում վճարումներ կատարելիս պարտավոր է վճարային քարտը հնարավորինս պահել իր ուշադրության կենտրոնում: Անհրաժեշտ է, որ գործարքներն իրականացվեն Քարտապանի ներկայությամբ:

11.12. Քարտապանը/Օգտագործողը չպետք է ներկայացնի վճարային քարտը վճարման համար կասկածելի վայրերում կամ ինտերնետային կայքերում:

11.13. Առևտրի և սպասարկման կետերում ՊԻՆ-կոդը մուտքագրելիս՝ Քարտապանը/Օգտագործողը պարտավոր է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ մուտքագրումն իրականացվի տերմինալի կամ դրան կցված ստեղնաշարի վրա: Արգելվում է ՊԻՆ-կոդի մուտքագրումը որևէ այլ կերպով:

11.14. Քարտապանը/Օգտագործողը չպետք է պատասխանի այն էլեկտրոնային նամակներին, որոնք պահանջում են տրամադրել անձնական կամ քարտային տվյալներ:

11.15. Քարտապանը/Օգտագործողը պետք է համոզվի, որ կայքի հասցեն համապատասխանում է առևտրային կետին:

11.16. Քարտապանը/Օգտագործողը, նախքան անծանոթ կայքում գնումներ կատարելը, պետք է հնարավորինս հետազոտի կայքի վերաբերյալ տեղեկատվությունը և այլ օգտատերերի կարծիքները համացանցում:

11.17. Քարտի անվտանգությունն ապահովելու նպատակով և Քարտապանի/Օգտագործողի ցանկությամբ Բանկը Քարտապանին/Օգտագործողին ուղարկում է կարճ հաղորդագրություն (SMS)՝ քարտային պրոդուկտի սակագներին համաձայն, ինչը կարող է զգալիորեն նվազեցնել քարտի ապօրինի օգտագործումը կամ օգտագործման արդյունքում Քարտապանի/Օգտագործողի կրած վնասը, եթե Քարտապանը/Օգտագործողը հաղորդագրությունը ստանալուց անմիջապես հետո միջոցներ ձեռնարկի քարտի բլոկավորման համար: Ընդ որում՝ կարճ հաղորդագրության ծառայության (SMS) ակտիվ լինելու դեպքում բջջային հեռախոսահամարի փոփոխության պարագայում

Քարտապանը պարտավոր է անմիջապես տեղեկացնել Բանկին:

11.18. Կարճ հաղորդագրություն (SMS) ստանալուն պես՝ Քարտապանը պետք է հավաստիանա, որ Գործարքը կատարվել է իր կամ իր կողմից լիազորված անձի կողմից, գիտությամբ, կարգադրությամբ կամ մասնակցությամբ:

11.19. Ինտերնետ միջավայրում գործարքներն անվտանգ կատարելու նպատակով սպասարկող Բանկը կարող է առաջարկել գործարքի կատարումը միանգամյա անվտանգության ծածկագրի կիրառմամբ (3DSecure Code): Տեխնիկական կամ Բանկից անկախ որևէ այլ պատճառով գաղտնաբառը չստանալու և դրա արդյունքում գործարքի ձախողման դեպքում Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Ընդ որում, անվտանգության նկատառումներից ելնելով, Բանկը կարող է սահմանափակել կամ արգելել առանց անվտանգության ծածկագրի (3DSecure Code) կիրառման ցանկացած գործարքի կատարումը:

11.20. Քարտի անվտանգությունն ապահովելու նպատակով Քարտապանը կարող է արգելափակել քարտով առանձին տեսակների կամ որոշակի երկրներում գործարքի իրականացման հնարավորությունը՝ Բանկ ներկայացնելով համապատասխան դիմում: Նման սահմանափակումներ կարող է կիրառվել նաև Բանկի որոշմամբ՝ քարտի անվտանգությունն ապահովելու նպատակով:

11.21. Բանկն իրավունք ունի իր հայեցողությամբ կասեցնել քարտի միջոցով տրամադրվող ծառայությունները, եթե հիմնավոր կասկածներ ունի քարտով կատարված գործարքի հավաստիության վերաբերյալ: Ծառայությունների կասեցումը Բանկի կողմից վերացվում է գործարքի հավաստիության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն կամ բավարար պարզաբանումներ ստանալուց հետո:

11.22. Անձնական տվյալների փոփոխության և/կամ ցանկացած այլ գործողությունների վերաբերյալ ստացված էլեկտրոնային հաղորդագրությունների և/կամ զանգերի իսկությունը ճշտել Բանկի շուրջօրյա կոնտակտային կենտրոնի՝ հեռ. **+374 10 510 000** միջոցով՝ մինչև պահանջվող գործողությունների կատարումը, ընդ որում, մինչև ստացված հաղորդագրությունների և/կամ զանգերի իսկության ճշտումը, Քարտապանի/Օգտագործողի կողմից պահանջվող գործողությունների կատարման դեպքում առաջացած ցանկացած զեղծարարության ռիսկը կրում է Քարտապանը:

12. ~~ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ~~

~~12.1. Բանկի հետ Պայմանագիր կնքելով՝ Քարտապանը հայտարարում է, որ ընդունում է սույն կանոնները և Բանկի սակագները, հասկացել է դրանց իմաստը, տեղյակ է, որ դրանք պարտադիր են Քարտապանի և Բանկի համար, կազմում են Պայմանագրի անբաժանելի մասը և ենթակա են պարտադիր կատարման:~~

~~12.2. Կանոնները տեղակայվում են Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.fastbank.am:~~

~~12.3. Քարտապանը հնարավորություն ունի սույն պայմանագրից բխող բողոք-պահանջները ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարին: Բանկը կնքել է համաձայնագիր Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ, որը տարածվում է միայն այն բողոք-պահանջների վրա, որոնց գույքային պահանջի չափը չի գերազանցում 100 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:~~

~~12.4. Կանոնները սահմանվում և հաստատվում են Բանկի տնօրինության կողմից և կարող են միակողմանի փոփոխվել վերջինիս կողմից:~~

~~12.5. Կանոնների փոփոխման դեպքում Բանկը պարտավորվում է 15 օրացուցային օր առաջ Բանկի և Քարտապանի միջև կնքված Պայմանագրով ընտրված հաղորդակցման եղանակով վերջինիս ծանուցել փոփոխությունների վերաբերյալ:~~

12. ԹՈՔԵՆԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

12.1. Բանկի կողմից թողարկված Visa և Mastercard միջազգային վճարահաշվարկային համակարգերի քարտերի համար հնարավոր է կատարել թոքենիզացում:

12.2. Թոքեն հնարավոր է ստեղծել ինչպես Բանկի Mobile հավելվածի միջոցով, այնպես էլ առանձին էլեկտրոնային դրամապանակների միջոցով՝ մուտքագրելով անհրաժեշտ քարտային տվյալները, ակտիվացնելով ստեղծված թոքենը OTP-ի միջոցով:

12.3. Թոքենով հնարավոր է գործարքներ կատարել այն բոլոր առևտրի և սպասարկման կետերում և բանկոմատներում, որտեղ տեղադրված են Visa և Mastercard միջազգային վճարահաշվարկային համակարգերի քարտերով անհպում գործարքների կատարման համար նախատեսված սարքավորումներ, և այն առցանց հարթակներում, որտեղ հնարավոր է վճարել տվյալ էլեկտրոնային դրամապանակում ստեղծված թոքենով:

12.4. Թոքենով կատարված գործարքները հավասարազոր են քարտով կատարված գործարքներին:

12.5. Թոքենով գործարքները հնարավոր է իրականացնել բջջային հեռախոսով կամ այլ համապատասխան սարքավորմամբ, որի վրա հասանելի է տվյալ էլեկտրոնային դրամապանակը: Թոքենով գործարք հնարավոր է կատարել սարքավորմամբ սահմանված համապատասխան նույնականացումը անցնելուց/հաստատելուց հետո (գաղտնաբառ, մատնահետք, կենսաչափական այլ տվյալների կիրառմամբ հաստատում և այլն):

12.6. Թոքենով գործարքի հետվերադարձի համար անհրաժեշտ է օգտագործել այն սարքավորման էլեկտրոնային դրամապանակի թոքենը, որով կատարվել է սկզբնական գործարքը:

12.7. Քարտապանը/Օգտագործողը ցանկացած պահի կարող է հեռացնել թոքենը էլեկտրոնային դրամապանակից կամ կապ հաստատել Բանկի հետ՝ այն դադարեցնելու նպատակով: Թոքենի հեռացումը չի փոխում քարտի կարգավիճակը:

12.8. Բլոկավորված/ոչ ակտիվ քարտի համար հնարավոր չէ ստեղծել թոքեն:

12.9. Քարտապանը/Օգտագործողը պարտավոր է ապահովել սարքավորման համար նույնականացման միջոցների գրանցման և պահպանման անվտանգությունը, և դրանք չփոխանցել երրորդ անձանց,ինչպես նաև Քարտապանը չպետք է տրամադրի թոքենի ակտիվացման համար ստացված OTP-ն երրորդ անձանց:

12.10. Սարքավորումը կորցնելու/գողացվելու, թոքենի կիրառման համար տրամադրված գաղտնաբառերի՝ երրորդ անձանց հասանելի դառնալու, կամ որևէ այլ կերպ թոքենից օգտվելու հնարավորության՝ երրորդ անձանց հասանելի դառնալու դեպքերում թոքենի բլոկավորման նպատակով անհրաժեշտ է անհապաղ կապ հաստատել Բանկի հետ: Բանկին ժամանակին չտեղեկացնելու հետևանքով Քարտապանի կրած վնասների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

12.11. Սարքավորումը փոխարինելուց Քարտապանը/Օգտագործողը պետք է համոզված լինի, որ փոխարինվող սարքավորումներից թոքեններն ապակցված են, կամ զանգահարի Բանկ՝ թոքենների ապակցման վերաբերյալ խորհրդատվություն ստանալու նպատակով:

12.12. Քարտի փակման, ինչպես նաև սույն կանոնների 7.1 կետով սահմանված՝ Բանկի կողմից քարտի բլոկավորման դեպքերում թոքենը նույնպես բլոկավորվում է:

13. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

13.1. Բանկի հետ Պայմանագիր կնքելով՝ Քարտապանը հայտարարում է, որ ընդունում է սույն կանոնները և Բանկի սակագները, հասկացել է դրանց իմաստը, տեղյակ է, որ դրանք պարտադիր են Քարտապանի և Բանկի համար, կազմում են Պայմանագրի անբաժանելի մասը և ենթակա են պարտադիր կատարման:

13.2. Կանոնները տեղակայվում են Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.fastbank.am:

13.3. Քարտապանը հնարավորություն ունի սույն Պայմանագրից բխող բողոք-պահանջները ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարին: Բանկը կնքել է համաձայնագիր Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ, որը տարածվում է միայն այն բողոք-պահանջների վրա, որոնց գույքային պահանջի չափը չի գերազանցում 100 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

13.4. Քարտային ծառայությունների հետ կապված և սույն պայմաններով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ, իսկ ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չլինելու դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներով: Սույն պայմանների հայերեն տարբերակը նախապատվություն ունի պայմանների անգլերեն տարբերակի նկատմամբ:

13.5. Բանկի և Քարտապանի միջև ծագած վեճերը կարգավորվում են ՀՀ դատարանների իրավասությամբ: Քարտապանն իրավունք ունի նաև Քարտային ծառայությունների հետ կապված Բանկի նկատմամբ պահանջներն օրենքով նախատեսված դեպքերում ներկայացնել ֆինանսական համակարգի հաշտարարին՝ Հաճախորդին տրամադրված ‹‹Ինչ՞ անել, եթե բողոք ունեք›› փաստաթղթով սահմանված կարգով:

13.6. Կանոնները սահմանվում և հաստատվում են Բանկի տնօրինության կողմից և կարող են միակողմանի փոփոխվել վերջինիս կողմից:

13.7. Կանոնների փոփոխման դեպքում Բանկը պարտավորվում է 15 օրացուցային օր առաջ Բանկի և Քարտապանի միջև կնքված Պայմանագրով ընտրված հաղորդակցման եղանակով վերջինիս ծանուցել փոփոխությունների վերաբերյալ: